ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 11 » ապրիլի 2018 թ. № 245-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՇՎԻ ՔԱՐՏԻ ՔԱՂՎԱԾՔԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի N 224-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 18-րդ կետի 4-րդ ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 313-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառությունն ապահովելու նպատակով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվան հաջորդող օրվանից:

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության կառավարությանն

առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի

2018թ. ապրիլի 11-ի N 245-Ա հրամանի

ՔԱՂՎԱԾՔ

Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի

«___» _____20___ թվականի դրությամբ _____-ի՝ հարկային մարմնի
(կազմակերպության լրիվ անվանումը, ֆիզիկական անձի դեպքում անունը, ազգանունը, ՀՎՀՀ)

կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները, դեբետային գումարները, սահմանված չափից ավել վճարված գումարները և միասնական հաշվում առկա գումարները, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա, կազմում են'

դրամ

Հարկի կամ վճարի անվանումը	Հարկի կամ վճարի չափը	Տույժը	Տուգանքը	Պարտավորության չափը (ընդամենը)
1	2	3	4	5
Ավելացված արժեքի հարկ				
Ներմուծման մասով ավելացված արժեքի հարկ				

Շահութահարկ				
Եկամտային հարկ				
Ակցիզային հարկ				
Ներմուծման մասով ակցիզային հարկ				
Շրջանառության հարկ				
Արտոնագրային հարկ				
Բնապահպանական հարկ և բնօգտագործման վճար				
Ներմուծման մասով բնապահպանական հարկ				
Ոչ ռեզիդենտի շահութահարկ				
Սոցիալական վճար (ամսական)				
Սոցիալական վճար (տարեկան)				
Պետական տուրք				
Ռոյալթի				
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար				
Ճանապարհային հարկ				
Հաստատագրված վճար				
Պարզեցված հարկ				
Եկամտահարկ				

Պարտադիր սոցիալական ապահովության վճար				
Տուգանքներ և վնասի հատուցման գումար				
Ընդամենը				

Դեբետային մնացորդ		Սահմանված չափից ավել վճարած գումարներ			Միասնական հաշվում առկա գումար
Ավելացված արժեքի հարկ	Ակցիզային հարկ	Մինչև 01.01.2018թ.	01.01.2018թ.-ից հետո սոցիալական վճարի գծով (հաշվարկի ճշգրտման արդյունքում առաջացած)	Պետական տուրքի գծով	
6	7	8	9	10	11

Ծրագրային սերվերի ստորագրություն

Սույն քաղվածքը կազմվում է կազմման օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տվյալների հիման վրա, որը կարող է փոփոխվել հսկողական միջոցառումների արդյունքում կամ հարկ վճարողի գործունեության վերաբերյալ նոր տվյալներ առաջ գալու պարագայում: Քաղվածքում ներառվում է անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությունը՝ սկսած 2018 թվականի հունվարի 1-ից: